

1996-2011թթ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից աղքատության մակարդակի գնահատման համար կիրառվող մեթոդաբանությունները

(1) 1996թ.-ից ի վեր, երբ Հայաստանում առաջին անգամ ներդրվեց տնային տնտեսությունների բարեկեցության ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ)՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, շարունակաբար ջանացել է կատարելագործել տնային տնտեսությունների մակարդակով հավաքագրվող տվյալների որակը և սեփական հմտությունը՝ աղքատության մակարդակի առավել ստույգ գնահատման իմաստով: Այդ ջանքերն արդարացված էին, քանզի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և վերջիններիս հիման վրա ստացված աղքատության մակարդակի գնահատականները շատ կարևոր ներդրում էին աղքատության հաղթահարման ռազմավարության ձևավորման և մոնիթորինգի (մշտադիտարկման) տեսանկյունից, ինչի համար պատասխանատվությունը ստանձնել էր ՀՀ կառավարությունը:

(2) 2004թ.-ին ՀՀ ԱՎԾ-ն լուրջ քայլեր էր ձեռնարկել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) կատարելագործման և աղքատության մակարդակի գնահատման մինչ 2008թ.-ը կիրառվող մեթոդաբանությունն արդիականացնելու ուղղությամբ: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝ բազմաթիվ խորհրդատվությունների և գործնական աշխատանքների արդյունքում (1) արդիականացվեց հետազոտության ընտրանքի ձևավորումը՝ օգտագործելով ՀՀ 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, (2) ընդլայնվեց ընտրանքի չափը, ապահովելու համար տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, (3) վերանայվեց SSԿԱՀ հարցաշարը՝ արտացոլելու համար 1998/99 թթ.-ից 2003թ.-ը տեղ գտած տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ինչպես նաև հարցաշարում ավելացվեց զբաղվածության վերաբերյալ համապարփակ բաժին, (4) ավելի խորը վերապատրաստում անցավ հետազոտությունն իրականացնող անձնակազմը:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից որոշակի ճշգրտվեց նաև աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը, կատարելագործվեց աղքատության միտումների և սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման ու վերլուծության կարողությունը: Այդ ճշգրտված մեթոդաբանությունը կիրառվեց 2004-2008թթ.-ին:

Սկսած 2007թ.-ից մինչև 2011թ.-ը՝ շնորհիվ <<Հազարամյակի մարտահրավեր>> հիմնադրամ-Հայաստան>> պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ-Հայաստան) համաֆինանսավորման, ընտրանքի չափը տարեկան կտրվածքով ընդլայնվեց, և 2006թ.-ի 5184-ի (միայն պետական բյուջեի հաշվին) համեմատ կազմեց 7872 տնային տնտեսություն:

(3) Սույն զեկույցում ներկայացված արդյունքները հիմնված են՝ 2009թ.-ից սկսած, աղքատության մակարդակի գնահատման ճշգրտված մեթոդաբանության վրա, որն իրականացվել է Համաշխարհային բանկի փորձագետների աջակցությամբ: Ի տարբերություն ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2004-2008թթ. կիրառվող մեթոդաբանության՝ ճշգրտված մեթոդաբանությունն ունի հետևյալ առանձնահատկությունները.

I. ձևավորվել է նոր նվազագույն պարենային զամբյուղ, որն արտացոլում է 2004-2008թթ.-ից ի վեր սպառման կառուցվածքի մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև պարենային և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արդիական տեսակարար կշիռները: Նոր սպառման մոդելը կառուցելիս կիրառվել է 2009թ.-ի SSԿԱՀ արդյունքները: Այդ նոր նվազագույն պարենային զամբյուղը կիրառվել է ծայրահեղ (պարենային) և ընդհանուր (ստորին ու վերին) աղքատության գծերը հաշվարկելու համար

(անցում է կատարվել աղքատության երկաստիճանից եռաստիճան մակարդակով գնահատման): Նոր զամբյուղը կկիրառվի որպես համեմատության հիմք հաջորդ մի քանի տարիների ընթացքում աղքատության մակարդակի գնահատման համար, և կճշգրտվի հաշվի առնելով հանրապետական միջին տարեկան գնաճի մակարդակը: